



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ՈՒՂԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Նոր ուղի համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Նոր ուղի, (0234)61182,

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

14 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2018թվականի N 28

ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի պահանջներով, Նոր ուղի համայնքի ավագանին
Որոշում է.

Հաստատել ավագանու թիվ 11 նիստի օրակարգը

1.Օրակարգը հաստատելու մասին

2.Նոր ուղի համայնքի տեղական տուրքերի և վճարների 2019թ դրույքաչափեր սահմանելու մասին:

3.2019թ Նոր ուղի համայնքի ղեկավարի, համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, պաշտոնային և հաստիքային դրույքաչափերը հաստատելու մասին:

4.Տարեկան բյուջեում հոդվածային փոփոխություն կատարելու , համայնքի ղեկավարին և աշխատակազմին պարգևատրում տալու մասին:

5.Նոր ուղի համայնքի նոյեմբերի 29-ի թիվ 26 և 27 որոշումների մեջ ուղղում կատարելու մասին:

Կողմ -4

Դեմ -0

Ձեռնպահ -0

ԱԴԻԼԽԱՆՅԱՆ ՎԱՆԻԿ

ԽԱԶԱՏՐՅԱՆ ԳԱՌՆԻԿ

ՍԻՄՈՆՅԱՆ ՆՈՐԻԿ

ՕՀԱՆՅԱՆ ՀԵՆՐԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՎԱԶԳԵՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ՈՒՂԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Նոր ուղի համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ. Նոր ուղի, (0234)61182,

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

14 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2018 թվականի N 29-Ն

**ՆՈՐ ՈՒՂԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ 2019Թ ԴՐՈՒՅՔԱԶԱՓԵՐ
ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ և 11-րդ հոդվածի պահանջներով, Նոր ուղի համայնքի ավագանին

Որոշում է.

Նոր ուղի համայնքում 2019թ համար սահմանել տեղական տուրքերի և վճարների հետևյալ դրույքաչափերը՝

1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում նոր շենքերի, շինությունների և ոչ հիմնական շինությունների շինարարության (տեղադրման) (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի) թույլտվության համար.

ա. հիմնական շենքերի և շինությունների համար՝

մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության շենքերի և շինությունների համար՝ յոթ հազար հինգ հարյուր դրամ,

բ. սույն կետի «ա» ենթակետով չնախատեսված շենքերի և շինությունների համար՝

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ տասնհինգ հազար դրամ,

- 500-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ քսանհինգ հազար դրամ,

- 1000-ից մինչև 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ քսանհինգ հազար դրամ.

- 3000-ից և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ հիսուն հազար դրամ.

գ. ոչ հիմնական շենքերի և շինությունների համար՝

- մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ մեկ հազար հինգ հարյուր դրամ,

- 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ երկու հազար հինգ հարյուր դրամ.

2) համայնքի վարչական տարածքում գոյություն ունեցող շենքերի և շինությունների վերակառուցման, վերականգնման, ուժեղացման, արդիականացման և բարեկարգման աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

ա. չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն՝ մեկ հազար հինգ հարյուր դրամ,

բ. բացի շենքերի և շինությունների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի տրամաչափային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, և, բացի սույն կետի «ա» ենթակետով սահմանված դրույքաչափից, կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված նորմերը և դրույքաչափերը՝ շենքերի և շինությունների ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքերի գործառական նշանակության փոփոխության մասով,

գ. նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարություն կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, սույն օրենքի իմաստով, այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված նորմերը և դրույքաչափերը.

3) համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների և քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված քանդման թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար՝ երկու հազար հինգ հարյուր դրամ.

4) համայնքի վարչական տարածքում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի վաճառքի թույլտվության համար օրացուցային տարվա համար՝ մեկ հարյուր հազար դրամ.

5) համայնքի վարչական տարածքում գանվող խանութներում և կրպակներում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի, մանրածախ առևտրի կետերում կամ ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և նորոգման ծառայության օբյեկտներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար օրացուցային տարվա համար՝ երեսուն հազար դրամ.

6) համայնքի վարչական տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի որոշակի վայրում մանրածախ առքուվաճառք իրականացնելու թույլտվության համար օրացուցային տարվա համար՝ քսանհինգ հազար դրամ.

7) համայնքի վարչական տարածքում ոգելից և ալկոհոլային խմիչքների և (կամ) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար

ա. ոգելից և ակոնիտային խմիչքի վաճառքի թույլտվության համար յուրաքանչյուր եռամսյակի համար

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում հինգ հազար դրամ,

- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում հինգ հազար դրամ,

- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում վեց հազար հինգ հարյուր դրամ,

- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում տաս հազար դրամ,

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում տասներկու հազար հինգ հարյուր դրամ,

- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում քսաներկու հազար հինգ հարյուր դրամ.

բ. ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար յուրաքանչյուր եռամսյակի համար

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում հինգ հազար դրամ,

- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում հինգ հազար դրամ,

- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում վեց հազար հինգ հարյուր դրամ,

- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում տաս հազար դրամ,

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում տասներկու հազար հինգ հարյուր դրամ.

- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում քսաներկու հազար հինգ հարյուր դրամ.

8) իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին համայնքի վարչական տարածքում «Առևտրի և ծառայությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված՝ բացօթյա առևտրի կազմակերպման թույլտվության համար յուրաքանչյուր օրվա համար՝ մեկ հարյուր յոթանասունհինգ դրամ մեկ քառակուսի մետրի համար.

9) համայնքի վարչական տարածքում առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտներին, խաղատներին և բաղնիքներին (սաունաներին) ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար օրացուցային տարվա համար

ա. առևտրի օբյեկտների համար՝ քսանհինգ հազար դրամ.

բ. հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝ տասներկու հազար հինգ հարյուր դրամ,

գ. բաղնիքների (սաունաների) համար՝ մեկ հարյուր հազար դրամ,

- դ. խաղատների համար՝ երկու հարյուր հիսուն հազար դրամ,
- ե. շահումով խաղերի համար՝ մեկ հարյուր քսանհինգ հազար դրամ,
- զ. վիճակախաղերի համար՝ հիսուն հազար դրամ.

10) համայնքի վարչական տարածքում, համայնքային կանոններին համապատասխան, հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանվում է՝

ա. հիմնական շինությունների ներսում՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար երկու հազար հինգ հարյուր դրամ,

- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար հինգ հազար դրամ,

- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար յոթ հազար հինգ հարյուր դրամ,

- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար տաս հազար դրամ,

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար տասնհինգ հազար դրամ,

- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար քսանհինգ հազար դրամ.

բ. ոչ հիմնական շինությունների ներսում՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար հինգ հարյուր դրամ,

- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար մեկ հազար դրամ,

- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար երկու հազար դրամ,

- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար չորս հազար դրամ,

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար յոթ հազար հինգ հարյուր դրամ,

- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար տասներկու հազար հինգ հարյուր դրամ.

.11) ավագանու սահմանած կարգին ու պայմաններին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար, բացառությամբ Երևան քաղաքի և միջպետական ու հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների օտարման շերտերում և պաշտպանական գոտիներում տեղադրվող գովազդների թույլտվությունների, յուրաքանչյուր ամիս մեկ քառակուսի մետրի համար՝

ա. ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ մեկ հազար դրամ,

բ. թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ մեկ հազար յոթ հարյուր հիսուն դրամ,

զ. սոցիալական գովազդի համար՝ զրո դրամ,

դ. այլ արտաքին գովազդի համար՝ յոթ հարյուր հիսուն դրամ,

ե. դատարկ գովազդային վահանակների համար՝ համայնքի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 25 %-ի չափով,

զ. եթե արտաքին գովազդ տարածող գովազդակիրը տեղաբաշխել և տարածել է իր կազմակերպության գովազդը՝ համայնքի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 10 %-ի չափով.

12) Հայաստանի Հանրապետության համայնքների խորհրդանիշերը (զինանշան, անվանում և այլն), որպես օրենքով գրանցված ապրանքային նշան, ապրանքների արտադրության, աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման գործընթացներում օգտագործելու թույլտվության համար օրացուցային տարվա համար՝ հիսուն հազար դրամ.

13) համայնքի վարչական տարածքում մարդատար-տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների միկրոավտոբուսների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար օրացուցային տարում յուրաքանչյուր մեքենայի համար՝ հինգ հազար դրամ.

14) համայնքի վարչական տարածքում քաղաքացիական հոգեհանգստի (հրաժեշտի) ծիսակատարության ծառայությունների իրականացման և (կամ) մատուցման թույլտվության համար օրացուցային տարվա համար՝ երկու հարյուր հիսուն հազար դրամ.

15) համայնքի վարչական տարածքում մասնավոր գերեզմանատան կազմակերպման և շահագործման թույլտվության համար օրացուցային տարվա համար՝
ա. 3 հա-ից մինչև 5 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ մեկ միլիոն երկու հարյուր հիսուն հազար դրամ,

բ. 5 հա-ից մինչև 7 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ երկու միլիոն հինգ հարյուր դրամ,

գ. 7 հա-ից մինչև 10 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ երեք միլիոն հինգ հարյուր դրամ,

դ. 10 հա-ից ավել մակերես ունեցող գերեզմանատների համար՝ հինգ միլիոն դրամ:

Տեղական վճարների դրույքաչափերը

1. Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Նոր ուղի համայնքում սահմանվում են տեղական վճարների հետևյալ դրույքաչափերը.

1) համայնքի տարածքում շենքի կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար-երկու հազար դրամ

2) ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված շինարարության թույլտվություն պահանջող, բոլոր շինարարական աշխատանքներն իրականացնելուց հետո շենքերի և շինությունների (այդ թվում՝ դրանց վերակառուցումը, վերականգնումը, ուժեղացումը, արդիականացումը, ընդլայնումն ու բարեկարգումը) կառուցման ավարտը ավարտական ակտով փաստագրման ձևակերպման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար-երեք հազար դրամ

3) ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված աշխատանքներն ավարտելուց հետո շահագործման թույլտվության ձևակերպման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար-երկու հազար դրամ

4) համայնքի տնօրինության և օգտագործման ներքո գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքերում փաստաթղթերի (փաթեթի)

նախապատրաստման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար- երեք հազար դրամ

5) համայնքի կողմից կազմակերպվող մրցույթների և աճուրդների մասնակցության համար համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար-երկու հազար դրամ

6) համայնքի վարչական տարածքում տոնավաճառներին (վերնխաժներին) մասնակցելու համար համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար-երկու հազար դրամ

7) Համայնքի կողմից աղբահանության վճար վճարողների համար աղբահանության աշխատանքները կազմակերպելու համար աղբահանության վճար սահմանել ա/ըստ հաշվառված անձանց քանակի համայնքում անձնագրային հաշվառման կանոններով ըստ հասցեի հաշվառում ունեցող և /կամ/ բնակվող յուրաքանչյուր բնակչի համար ամսական հարյուր քսան դրամ:

բ/ոչ կենցաղային և խոշոր եզրաչափի աղբի համար

ըստ ծավալի՝ մեկ խորանարդ մետր աղբի համար՝ հազար դրամ

ըստ զանգվածի՝ մեկ տոննա աղբի համար՝ երկու հազար դրամ

գ/առևտրի, հանրային սննդի և բնակչության սպասարկման այլ ծառայություններ իրականացվող շինությունների մատով՝ 1քմ համար քսան դրամ

7.1 Իրավաբանական անձանցից յուրաքանչյուր ամսվա համար 6720դրամ:

8) համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ տրամադրելու համար՝ մեկ փաստաթղթի համար մեկ հազար դրամ փոխհատուցման վճար:

9/Համայնքի տարածքում անշարժ գույքի օբյեկտներին նոր հասցե տրամադրելու համար՝ հազար հազար դրամ:

Կողմ -4

Դեմ -0

Ձեռնպահ -0

ԱԴԻԼԽԱՆՅԱՆ ՎԱՆԻԿ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ԳԱՌՆԻԿ

ՍԻՄՈՆՅԱՆ ՆՈՐԻԿ

ՕՇԱՆՅԱՆ ՀԵՆՐԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



ՎԱՉԳԵՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ՈՒՂԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Նոր ուղի համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Նոր ուղի, (0234)61182,

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

14 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2018թվականի N 30-Ն

**2019Թ ՆՈՐ ՈՒՂԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐԻ, ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԵՎ ՀԱՍՏԻՔԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱԶԱՓԵՐԸ
ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 11-րդ և 28-րդ կետերի պահանջներով Նոր ուղի համայնքի ավագանին

Որոշում է.

1. Հաստատել Նոր ուղի համայնքի ղեկավարի, համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, պաշտոնային և հաստիքային դրույքաչափերը:

Աշխատակիցների թվաքանակը - 6

Համայնքի ղեկավար - 165000 դրամ

Համայնքային ծառայության պաշտոններ - 3

1. Նոր ուղի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար / 1.2-1/-134000 դրամ

2. Նոր ուղի համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ / 3.1-1/ -129000 դրամ

3. Նոր ուղի համայնքապետարանի աշխատակազմի առաջին կարգի մասնագետ / 3.2-1/ -123000 դրամ

Քաղաքացիական աշխատողներ

Ակումբագրադարանավար - 100000 դրամ

Տեխսպասարկման անձնակազմ

Հավաքարար - 75170 դրամ

2. Առաջարկել Նոր ուղի համայնքի ղեկավար Վ. Վարդանյանին համայնքապետարանի աշխատակազմի, համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկում

համապատասխան փոփոխություն կատարելու առաջարկությամբ սահմանված կարգով դիմել

22 Կառավարության լիազորված պետական կառավարման մարմին:

3. Ուժը կորցրած ճանաչել Նոր ուղի համայնքի ավագանու 2017 թվականի դեկտեմբերի 8-ի թիվ 32-Ն որոշումը:

4. Սույն որոշման առաջին և երրորդ կետերը ուժի մեջ են մտնում Նոր ուղի համայնքապետարանի աշխատակազմի, համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկում համապատասխան փոփոխություններ կատարելու մասին իրավական ակտն ուժի մեջ մտնելու պահից:

Կողմ -4

Դեմ -0

Ձեռնպահ -0

ԱԴԻԼԽԱՆՅԱՆ ՎԱՆԻԿ

ԽԱԶԱՏՐՅԱՆ ԳԱՌՆԻԿ

ՍԻՄՈՆՅԱՆ ՆՈՐԻԿ

ՕՀԱՆՅԱՆ ՀԵՆՐԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ



ՎԱԶԳԵՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ՈՒՂԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Նոր ուղի համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Նոր ուղի, (0234)61182,

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

14 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2018թվականի N 31-Ն

**ՏԱՐԵԿԱՆ ԲՅՈՒՋԵՌԻՄ ՀՈԴՎԱԾԱՅԻՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ,ՀԱՄԱՅՆՔԻ
ՂԵԿԱՎԱՐԻՆ ԵՎ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻՆ ՊԱՐԳԵՎԱՏՐՈՒՄ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 5-րդ և 6-րդ կետերի պահանջներով, Նոր ուղի համայնքի ավագանին՝

Որոշում է.

Ծախսային մասում կատարել հոդվածային փոփոխություն և տալ պարզևատրում Նոր ուղի համայնքի ղեկավարին և աշխատակազմին

1.Պակասեցնել կառավարման մարմնի պահպանում 4111 /աշխատողների աշխատավարձեր և հավելավճար հոդվածից 628585 դրամ:

Ճշտված պլան սահմանելով 9363415 դրամ

2.Ավելացնել օրենսդիր և գործադիր կառավարման մարմնի պահպանում 4112 պարզևատրումներ դրամական խրախուսումներ հոդվածին 628585 դրամ:

Ճշտված պլան սահմանելով 628585 դրամ:

1.Վ.Վարդանյան / համայնքի ղեկավար/ -100 % դրույքի չափով

2.Ա.Գևորգյան / աշխատակազմի քարտուղար/ -100 % դրույքի չափով

3.Ս.Ղուկասյան / առաջատար մասնագետ/-100 % դրույքի չափով

4.Կ.Հայրապետյան / առաջին կարգի մասնագետ/ - 100 % դրույքի չափով

5.Վ.Օհանյան / ակումբագրադարանավար/ -40% դրույքի չափով

6.Տ.Սիմոնյան / տեխ.աշխատող/ - 50 % դրույքի չափով

Կողմ -4

Դեմ -0

Ձեռնպահ -0

ԱԴԻԼԻԱՆՅԱՆ ՎԱՆԻԿ

ԽԱԶԱՏՐՅԱՆ ԳԱՌՆԻԿ

ՍԻՄՈՆՅԱՆ ՆՈՐԻԿ

ՕՃԱՆՅԱՆ ՀԵՆՐԻԿ

(Handwritten signatures for the four names listed to the left)

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱԳԱՐ՝



(Handwritten signature of the official)

ՎԱԶԳԵՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ՈՒՂԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Նոր ուղի համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Նոր ուղի, (0234)61182,

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

14 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2018թվականի N 32-Ն

ՆՈՐ ՈՒՂԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՆՈՅԵՄԲԵՐԻ 29-Ի ԹԻՎ 26 ԵՎ 27 ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՄԵՋ ՈՒՂՂՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի պահանջով, Նոր ուղի համայնքի ավագանին
Որոշում է

1. Հանդիսությունների սրահի համար 4241 հոդվածով նախատեսված 98.1 հազ դրամի փոխարեն կարդալ 127.5 հազ դրամ:
2. Նոր ուղի համայնքի ավագանու նոյեմբերի 29-ի թիվ 27 որոշման մեջ Նոր ուղու միջնակարգ դպրոցի ջեռուցման համակարգի կառուցման համար նախատեսված 5113 հոդվածի փոխարեն կարդալ 4657 հոդված / կապիտալ դրամաշնորհ / :

Կողմ -4

Դեմ -0

Ձեռնպահ -0

ԱԴԻԼԽԱՆՅԱՆ ՎԱՆԻԿ

ԽԱԶԱՏՐՅԱՆ ԳԱՌՆԻԿ

ՍԻՄՈՆՅԱՆ ՆՈՐԻԿ

ՕՀԱՆՅԱՆ ՀԵՆՐԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ



ՎԱԶԳԵՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ